

Ինչպէս կը տեսնենք այս մէջըրումէն, տասը տարի առաջ Տէրեան եւ ընկերները իրենց «նոսքի տակի հողը ամբացնելու» համար, հայկական հարցի ամբողջական լուծումը կը վրտաճէին ժողովրդական գործավարներու խորհուրդին:

Բողջելիկեան Ռուսաստանի օրինատացիան կ'ընդգրկէին հայ բողջելիկները, ահնյայտնի յոյսեր սնուցանելով, որ իրենց յեղափոխական հրդեհի հետ, պիտի յաջողին լուծում տալ նաեւ հայկական հարցին...

Հիմքը կը դրուէր բողջելիկեան Ռուսաստանի քաղաքականութեան: Ռուսաստանը կը կորուէր Հայաստանէն: Մենք կը միայնիք միւս միակ թուրք-թաթարական յորձանքին դէմ:

Կանգնելով հայ ժողովուրդի ինքնորոշման տեսակէտի վրայ, կը շարունակէ:

«Մենք, հայ Սոցիալ-Դեմոկրատներս (բողջելիկներս), հաստատ գիտենք, որ միայն բանուորա-գիւղացիական յեղափոխութիւնը եւ բանուորի ու աղքատ գիւղացիները կառավարութեան ստեղծումը կարող է ազատութիւն բերել սահմանի այն կողմ գտնուող մեր տաճկահայ եղբայրներին եւ բոժել նրանց վէրքերը: Մենք միշտ մատնացոյց ենք արել այս բանը հայ գիւղացիները եւ բանուորները մասսաներին, միշտ խորտակել ենք այն պատրանքները, որ պատուաստել են նրանց մանր-բուրժուական եւ բուրժուական կուսակցութիւնները ոչ միայն եւրոպական իմպերիալիստական գիւանագիտութեան նկատմամբ այլ եւ յեղափոխական դեմոկրատիայի կառավարութեան նկատմամբ, որ կողմիցիս էր կազմել կատեղների հետ կերենակու գլխաւորութեամբ:

«Եւ ահա հասել է, վերջապէս, բոպէն, երբ մենք հայ մասսաներին կարող ենք ասել՝ «պաշտպանեցէք բանուորի եւ գիւղացիների կառավարութիւնը եւ հաստատապէս հաւատացէք, որ նա չի խորի ձեզ, կը տայ ձեզ ազատութիւն, որին ապարդիւն ձգտում էիք մինչեւ այժմ եւ որի համար դուք այնքան արիւն եւ արցունք էք թափել:

«Պարզ է ինքնին, որ մենք, հայ բողջելիկներս, մի բոպէ անգամ չենք կասկածում, որ այս ասելով, մենք մեր բանուորներին եւ գիւղացիներին ասում ենք իսկական ճշմար-

Ռուսական օրինատացիան օդը կը ցնդէր: Այդ օրինատացիայի հիմքը թրքական վտանգի դէմ բռունցքի մը յայտնարեւումն էր, ինչ որ ոչ միայն կը բացակայէր, այլ, քաղաքական եւ գիւանագիտական տուեալներով՝ հակառակ դասաւորում մը կը ստանար, ուժ եւ թիկունք դառնալով թուրքին:

Բրեստ-Լիտովսքէն յետոյ, տեղի ունեցած դէպքերը յայտնի են բոլորին: Յայտնի է նաեւ Հայաստանի Հանրապետութեան կազմութեան եւ հետապնդած քաղաքականութեան պատմութիւնը, ինչպէս նաեւ բողջելիկեան Ռուսաստանի արշաւանքը անկախ Հայաստանի դէմ: Ռուսական եւ թրքական արշաւանքներու հետեւանքով Հայաստանը կորսնցուց իր հողերու մեծ մասը եւ իր անկախութիւնը: Հայ

տութիւնը, բայց եւ այնպէս մեզ թւում է, որ մեր ղեկավարներն ու ընկերները, որ այժմ իշխանութեան գլուխն են անցել — ժողովրդական կոմիսարները — կ'ամբապնդէին մեր նոսքի տակի հողը (ընդգծումը իմս է Կ. Ս.) եւ կ'աջակցէին մեզ, եթէ հնարաւոր դատէին այժմ իսկ հրատարակել մի ղեկրեա, որով հաստատուէր բանուորական եւ գիւղացիական կառավարութեան հաստատ մտադրութիւնը՝ վճռապէս աջակցելու թիւրքահայերի ձգտումին դէպի ազգային լիակատար ինքնորոշում եւ միաժամանակ ընդգծուէր, որ ժողովրդական կոմիսարների կառավարութիւնը ամէն կերպ աջակցելու է՝ ստեղծելու այն երաշխիքները, որոնք Տաճկահայաստանի հայ ազգաբնակչութեանը տային ինքնորոշուելու իսկական հնարաւորութիւն:

«Այսպիսի երաշխիք պիտի լինի բոլոր հայերին հայրենիք վերադառնալու հնարաւորութեան ստեղծումը, ինչպէս, բունի կերպով Միջազնաք եւ Տաճկաստանի միւս վայրերը տեղահանուածներին, այնպէս էլ Ռուսաստանում գտնուող փախստականներին եւ նրանց, որոնք դադրել են Ամերիկա եւ այլ երկիրներ: Միայն այս երաշխիքները ապահովելու դէպքում կարելի է խօսել Հայաստանի իսկական ինքնորոշման մասին: Այսպէս բոլոր զրոյցները հայ ժողովուրդի ինքնորոշման մասին պիտի հնչեն իբրեւ դատարկ խօսքեր»: «Նորք», 1925 թ. թիւ 5-6, էջ 413):